ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱՀԱՐՈՍՅԱԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 59- 60 (16255) ՈՒՐԲԱԹ, 25 ՀՈՒԼԻՍԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ԳՈՐԾԱԴԻՐ

ԿԱԴՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ

Հուլիսի 21-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց կառավարության կազմում կատարված կադրային փոփոխությունների մասին: Վարչապետի հայտարարությամբ, վեց նախարար եւ մեկ պետնախարար թողնում են իրենց պաշտոնները:

Հատուկ այդ նպատակով հրավիրված ճեպասուլիսում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ Նախարարների կաբինետի անդամների պաշտոնաթողությունը կապված է կառավարության աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու ցանկության հետ:

«Բոլոր այն խոստումները, որոնք «Վրացական երազանքը» տվել է վրաց ժողովրդին, եւ առաջադրված խնդիրները լիարժեք կատարելու համար, մեզ անհրաժեշտ է կրկնապատկված եռանդ ու կրկնա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՆԱԽԱԳԱՀԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆ Է»

Ինչպես հայտարարեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, երբ երկրում կատարվում են կադրային փոփոխություններ, եւ փոխվում է կառավարության կազմի մեկ երրորդը, նման դեպքերում, նախագահի քաղաքական դերը դառնում է նշանակալից:

«Նման պայմաններում, նախագահը կարեւոր դեր է կատարում, քանզի, ինչպես նշված է երկրի սահմանադրության մեջ, նախագահը սահմանադրության երաշխիքն է, ժողովրդական համակարգի երաշխիքը, հետեւաբար, հանդիսանում է իշխանության տարբեր ճյուղերի միջեւ հավասարակշռության ապահովողը: Խորհրդարանն անցյալ տարի վստահության քվե հայտնեց 20 նախարարի եւ վարչապետին: Սահմանադրության համաձայն, եթե փոխվում է 7 նախարար, ապա կրկին ծագում է վստահության քվեի հանձնման հարցը, իսկ նման հարցը կարող է առաջադրել միայն նախագահը»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Միաժամանակ, նախագահը հավելեց, որ կառավարության կազմի փոփոխության մասին իր հայտարարությունն ուներ նաեւ քաղաքական ծանրաբեռնվածություն, քանի որ ինքը պարզաբանելու էր փոփոխության պատճառը: «Կարեւոր էր, որ նոր պայմաններում ես հասարակությանը պարզաբանեի, թե ինչ է կատարվում, եւ ինչպես է այն իրականացվելու»,- հայտարարեց Վրաստանի նախագահը:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԸՀ-Ն ՀՐԱՊԱՐԱԿԵՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԲՈԼՈՐ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀԱՂԹԵԼ ԵՆ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Հուլիսի 22-ին Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակեց հուլիսի 12-ին անցկացված տեղական ինքնակառավարման ընտրությունների երկրորդ փուլի վերջնական արդյունքները:

ԿԸՀ-ի տվյալներով, Թբիլիսիի քաղաքապետի ընտրություններում «Վրացական երազանք» կոալիցիայի թեկնածու Դավիթ Նարմանիայի օգտին քվեարկել է ընտրողների 72,47 տոկոսը: Նրա մրցակից, «Միասնական ազգային շարժման» թեկնածու Նիկա Մելիային պաշտպանել է ընտրողների 27,53 տոկոսը:

Տեղական ինքնակառավարման ընտրությունների երկրորդ փուլն ացկացվեց նաեւ ինքնակառավարման 8 քաղաքներում եւ 13 մունիցիպալիտետներում: ԿԸՀ-ի տվյալներով, երկրորդ փուլի արդյունքներով, ինքնակառավարման բոլոր քաղաքներում քաղաքապետ են ընտրվել

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՊՈԵԶԻԱՅԻ ՏԵՐՅԱՆԱԿԱՆ ՕՐԸ

ՆՐԱ ՊՈԵԶԻԱՆ ՄԻՇՏ ՄԵԶ ՀԵՏ Է



Ո՞ւր ասես, որ չեն տանում ճամփաները, անգամ՝ աշխարհի ծայրը: Բայց այդ օրը՝ 2014-ի հուլիսի 20-ին, բոլոր ճամփաները տանում էին Գանձա, մեծ պոետի՝ Վահան Տերյանի ծննդավայր:

Մարդիկ գալիս էին հեռու-մոտիկ վայրերից, քաղաքամայր Թբիլիսիից ու Երեւանից, Ախալցիխեից ու Գյումրիից, Ծալկայից, Ասպինձայից, Նինոծմինդայի շրջանից ու հարակից բնակավայրերից: Գալիս են մասնակիցը դառնալու Պոեզիայի տերյանական օրվա տոնակատարության: Ներքին ուրախությամբ, սրտի դողով են պոեզիայի սիրահարները մտնում անմահ բանաստեղծի հայրենի օջախ, նրա տուն-թանգարան, հուշամատյանում գրառումներ անում: Շատերը մտնում են հարեւան Սուրբ Կարապետ եկեղեցի, որտեղ պատարագ է մատուցվում...

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՌԵԺԻՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ

Ընթացիկ տարվա սեպտեմբերի մեկից Վրաստանում ուժի մեջ է մտնում «Օտարերկրացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց իրավական վիճակի մասին» օրենքը, ըստ որի, սահմանի վրա այցեգրի հանձնումը սահմանափակվում է, իսկ առանց արտոնագրի Վրաստանում գտնվելու ժամկետը 360 օրվանից նվազեցվում է մինչեւ 180 օր:

Ռուսական մամուլում տեղ գտած հայտարարության համաձայն, սեպտեմբերի 1-ից իբր Վրաստանում երկարաժամկետ բնակություն հաստատող, բիզնես գործունեություն ծավալող կամ սովորող Հայաստանի քաղաքացիների մուտքը կսահմանվի հատուկ ռեժիմով:

Այդ կապակցությամբ, Թբիլիսիում Հայաստանի դեսպանությունը դիմել է Վրաստանի ԱԳ նախարարությանը: Ի պատասխան հարցման, Վրաստանի ԱԳ նախարարությունից հաղորդել են, որ Վրաստանը մտադիր չէ Հայաստանի հետ մուտքի արտոնագրային (վիզային) ռեժիմ սահմանել:

Սույն տեղեկատվությունը տարածել է Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը facebook-յան իր էջում:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ ՉԻ ԱՐԳԵԼԱԿԻ ԵՐԿԿՈՂՄ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եվրոպական եւ եվրատլանտյան կառույցների ինտեգրման հարցերով Վրաստանի պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլին ներկայացրեց Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրի վավերացումից հետո երկրի արտաքին քաղաքական կուրսը:

Խոսելով Եվրամիության հետ ինտեգրման հետագա գործընթացի, այդ թվում՝ ոչ պայմանագրային այցեկարգի հաստատման՝ Հա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՄԻՋԱԴԵՊ

ԸՆԴՀԱՐՈՒՄ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ

ՈՐԻ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԵՐԿՐԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Շաբաթ՝ հուլիսի 19-ին, Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցու հարակից տարածքում, տեղի ունեցավ ոչ հաճելի միջադեպ:

Կեսօրին եկեղեցու հարակից տարածքի ավտոմեքենաների կայանատեղում վիճաբանություն է ծագել մի կնոջ ու նրա ծանոթների եւ եկեղեցու հոգեւորականի ու թեմի Առաջնորդարանի աշխատակիցների միջեւ: Արդեն երեկոյան, ըստ Վիրահայոց թեմի տարածած հայտարարության, «նույն խումբը, հավաքագրելով մոտ 30-40 հոգի, ընդհարվել է եկեղեցու առջեւ կանգնած հոգեւորականների ու Առաջնորդարանի աշխատակիցների հետ...»:

Տեղի ունեցածի կապակցությամբ, Վիրահայոց թեմի Առաջնորդարանը հանդես է եկել հայտարարությամբ, որտեղ մասնավորապես ասված է. «Մենք բարձր ենք

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԿԱԲԻՆԵՏԻ ՆՈՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԼԻՆԵԼՆ Է»

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, ներկայացնելով նախարարների թեկնածուներին, հայտարարեց, որ կաբինետի նորացման հիմնական նպատակը դրա առավել արդյունավետ գործունեության ապահովումն է:

«Մենք շատ արդյունավետ կառավարություն ունենք: Նորացման հիմնական նպատակը առավել արդյունավետ գործունեության ապահովումն է: Բացի այդ, արվում է ամեն ինչ, որպեսզի վերացվեն մինչ այդ թույլ տրված սխալները»,- հայտարարեց վարչապետը: Իրակլի Ղարիբաշվիլին իր խոսքում անդրադարձավ նաեւ այն նախարարների գործունեությանը, ում փոփոխությունները չառնչվեցին: Նրա խոսքերով, ինքը կշարունակի ուշադրությամբ հետեւել նրանց աշխատանքին: «Ինչ վերաբերում է մյուս նախարարներին, ովքեր մնացին իրենց պաշտոններում, ապա կարող եմ ասել, որ ուշադրությամբ կհետեւեմ նրանց, այդ թվում՝ նաեւ նախարարների կաբինետի այն անդամներին, ում վերաբերյալ ինձ մոտ ծագել են հարցեր: Թեպետ, ներկա դրությամբ, ոչինչ չեմ ծրագրում, սակայն գտնում եմ, որ կառավարական փոփոխություններն օգուտ կբերեն ժողովրդին ու երկրին: Մեր թիմը կդառնա առավել համախումբ եւ արդյունավետ»,- հայտարարեց վարչապետը:

ԿԱԴՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պատկված մոտիվացիա, ավելի մեծ ցանկություն եւ ավելի բարձր արդյունավետություն: Ուստի, ես կարծում եմ, որ մենք պետք է անցնենք նոր ռեժիմի, եւ մեզ հարկավոր է աշխատանքի նոր տեմպ, քանի որ մենք կանգնած ենք այլ մարտահրավերների առջեւ»,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին:

Խոսելով կադրային փոփոխությունների կապակցությամբ նախարարների կաբինետի արձագանքի մասին՝ վարչապետը նշեց. «Ես նախարարներին անձամբ ծանոթացրի իմ այդ որոշման հետ, եւ նրանք դա նորմալ ընկալեցին»: Վարչապետի խոսքերով, կադրային փոփոխությունների մասին տեղեկացվել էին ոչ միայն նախարարները, այլեւ «Վրացական երազանք» կոալիցիայի քաղխորհուրդը:

Անդրադառնալով երկրում արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման հարցին՝ վարչապետը կտրականապես բացառեց երկրում արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման հնարավորությունը:

«Դա բացառված է: Վրաստանում ընտրություններ չեն անցկացվի մինչեւ 2016 թվականի խորհրդարանական ընտրությունները»,- նշեց նա:

Վարչապետի հայտարարության համաձայն, կառավարությունում կատարված կադրային փոփոխությունները, մասնավորապես, վերաբերել են Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարար Գուրամ Օդիշարիային, շրջակա միջավայրի ու բնապաշարների նախարար Խաթունա Գոգալաձեին, փախստականների, տարաբնակեցման եւ հարկադիր վերաբնակվածների գործերի նախարար Դավիթ Դարախվելիձեին, գյուղատնտեսության նախարար Շալվա Փիփիային, տարածաշրջանների զարգացման ու ենթակառուցվածքի նախարար Էլգուջա Խոկրիշվիլուն, պատիժների կատարման եւ պրոբացիայի նախարար Սոզար Սուբարիին ու սփյուռքի հարցերի պետնախարար Կոնստանտին Սուրգուլաձեին:

Դրա հետ մեկտեղ, ինչպես հայտարարեց վարչապետը, **Ս.Սուբարին կզբաղեցնի փախստականների, տարաբնակեցման եւ հարկադիր վերաբնակների գործերի նախարարի պաշտոնը**, իսկ **Է.Խոկրիշվիլին կգլխավորի Վրաստանի շրջակա միջավայրի եւ բնապաշարների նախարարությունը**:

Ինչպես տեղեկացրել է կառավարության խորհրդարանական քարտուղար Շալվա Թադումաձեն, վարչապետի կարգադրությամբ, նախարարների թեկնածուների ցուցակը առաքվել է նախագահի աշխատակազմ: Իրակլի Ղարիբաշվիլին Վրաստանի նախագահի հաստատմանն է ներկայացրել **գյուղատնտեսության նախարարի պաշտոնի համար Օթար Դանելիայի** (մինչ այդ, գյուղատնտեսության առաջին փոխնախարարն էր), **պատիժների կատարման եւ պրոբացիայի նախարարի պաշտոնի համար Գիորգի Մղեբրիշվիլու** (Քվեմո Քարթլիի տարածաշրջանի նահանգապետ), **մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարի համար՝ տնտեսագետ Միխեիլ Գիորգաձեի**, **տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարի պաշտոնի համար՝ Դավիթ Շավլիշվիլու** (մինչ այդ, ավտոճանապարհների դեպարտամենտի նախագահն էր), **սփյուռքի հարցերով պետնախարարի պաշտոնի համար՝ Գելա Դումբաձեի** (մինչ այդ, նա նույն գերատեսչության առաջին փոխնախարարն էր) թեկնածությունները: Հիշեցնենք, որ պատժի կատարման եւ պրոբացիայի նախկին նախարար Սոզար Սուբարին զբաղեցնելու է փախստականների եւ բռնագաղթվածների նախարարի պաշտոնը, իսկ տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախկին նախարար Գիորգի Խոկրիշվիլին կգլխավորի բնապահպանության նախարարությունը:

Սահմանադրության համաձայն, նախարարների նորացված կաբինետին վստահության քվե հայտնելու է խորհրդարանը, իսկ դրա համար օրենսդրական մարմնին պետք է դիմի նախագահը:

Խորհրդարանին դիմելու համար նախագահի իրավասության տակ կա յոթ օր: Թեպետ նախնական տվյալներով, երկրի նախագահն արդեն ստորագրել է կառավարության նոր կազմը:

Ինչպես հայտարարեց խորհրդարանի փոխխոսնակ Մանանա Կոբախիձեն, ամենայն հավանականությամբ, կառավարության նոր կազմի վստահության քվե հայտարարելու հարցը խորհրդարանում կքննարկվի այս շաբաթ օրը՝ հուլիսի 26-ին:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ ՉԻ ԱՐԳԵԼԱԿԻ ԵՐԿԿՈՂՄ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րավային Օսեթիայի եւ Աբխազիայի, ինչպես նաեւ Ռուսաստանի հետ հարաբերությունների ու ՆԱՏՕ-ին անդամակցության հեռանկարների մասին՝ Պետրիաշվիլին անդրադարձավ նաեւ Հայաստանի հետ տնտեսական հետագա համագործակցության հարցին: Պետնախարարը նշեց, որ, չնայած Մաքսային միությանը Հայաստանի հնարավոր անդամակցությանը, Երեւանն ու Թբիլիսին շարունակում են պահպանել բարիդրացիական հարաբերությունները եւ, ամենակարեւորը, երկու երկրների միջեւ գործում է ազատ առեւտրի պայմանագիրը: «Այդ ուղղությամբ, առանձնակի հիմնախնդիրներ չեմ տեսնում, եւ հարկ է նշել, որ դրական նշանակություն ունի այն փաստը, որ հարցը չի քաղաքականացվում, այլ ընթանում է գործնական հունով»,- հայտարարեց Ալեքսի Պետրիաշվիլին:

Նա վստահություն հայտնեց, որ առաջիկայում էլ դա այդպես կշարունակվի, եւ հնարավոր կլինի պահպանել ոչ միայն առկա մակարդակը, այլեւ բարելավել երկու երկրների միջեւ առեւտրական հարաբերությունները:

ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՀԱՄԱՏԵՂ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Հուլիսի 18-ին կայացավ Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Թենգիզ Շարմանաշվիլու հանդիպումը Հայաստանի ոստիկանության պետի առաջին տեղակալ, ոստիկանության գեներալ-լեյտենանտ Հունան Պողոսյանի հետ:

Հանդիպմանը, Հունան Պողոսյանի հավաստմամբ, Հայաստանի ոստիկանության ղեկավարությունը պատրաստակամություն է հայտնել աջակցել հարեւան երկրի գործընկերներին եւ զարգացնել հարաբերությունները՝ ի շահ հանցավորության դեմ միասնական պայքարի:

Հանդիպմանը Թենգիզ Շարմանաշվիլին Հայաստանի ոստիկանության պետի առաջին տեղակալին ներկայացրեց Հայաստանում Վրաստանի դեսպանությանը կից Վրաստանի ներքին գործերի նախարարության նորանշանակ ոստիկանական կցորդ Կամո Գալստյանին:

Հանդիպմանը մասնակցել է Հայաստանի ոստիկանության շտաբի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Վարդան Եղիազարյանը:

Հունան Պողոսյանը նշեց, որ երկու երկրների ոստիկանական կառույցների հարաբերություններն ունեն ամուր հիմք, եւ դրանք առավել զարգացնելու համար պետք է ակտիվացնել Հայաստանի ու Վրաստանի միջսահմանային ոստիկանական փոխգործակցությունը, մասնավորապես՝ համատեղ օպերատիվ-հետախուզական բնույթի աշխատանքներում:

Կողմերը հույս հայտնեցին, որ վրացահայկական ոստիկանական համագործակցությունն ավելի կխորանա ու կզարգանա՝ խթանելով հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը:



ՈՒԿՐԱԻՆԱ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՄԱՍՆԱԿԻ ԶՈՐԱՀԱՎԱՔ

Ուկրաինայի Գերագույն ռադան հավանություն է տվել մասնակի զորահավաքի վերաբերյալ երկրի նախագահ Պյոտր Պորոշենկոյի հրամանագրին:

Օրենքի համաձայն, զորահավաքը կանցկացվի նշված հրամանագրի ուժի մեջ մտնելու պահից 45 օրվա ընթացքում:

«Մասնակի զորահավաքի վերաբերյալ որոշում ընդունելու անհրաժեշտությունը պայմանավորված է Ուկրաինայի տարածքում ահաբեկչական դրսեւորումների տարածմամբ, որոնք երկրի արեւելքում հանգեցնում են խաղաղ բնակչության, զինվորական կազմավորումների եւ Ուկրաինայի իրավապահ մարմինների զինծառայողների ու աշխատակիցների զոհվելուն»,- ասված է օրենքի բացատրագրում:

Զորահավաք հայտարարելու պատճառ է դարձել նաեւ սահմանում Ռուսաստանի զորքերի կուտակումը:

ՎԱՐՉԱՊԵՏ ԱՐՍԵՆԻ ՅԱՑԵՆՅՈՒԿԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Հուլիսի 24-ին Ուկրաինայի Գերագույն ռադայի կողմից նշանակված վարչապետ Արսենի Յացենյուկը հրաժարական է ներկայացրել: «Խորհրդարանական կոալիցիայի ցրվելու, ինչպես նաեւ մի շարք կարեւոր օրենսդրական նախագծերի չընդունման պատճառով ես հայտարարում եմ իմ հրաժարականի մասին»,- ասել է Յացենյուկը ռադայի ամբիոնից:

«Այն, ինչ կատարվեց այսօր խորհրդարանում, կունենա շատ բարդ, եթե չասենք, դրամատիկ հետեւանքներ երկրի համար»,- նշել է նա:

Վերին ռադայի խոսնակ Ալեքսանդր Տուրչինովն առաջարկել է պատգամավորներին վարչապետի թեկնածություն ներկայացնել:

Վարչապետի հրաժարականը նշանակում է, որ հրաժարական է ներկայացնում կառավարության ողջ կազմը: Նախարարները կիրականացնեն իրենց պարտավորությունները մինչ Գերագույն ռադայում կձեւավորվի նոր կոալիցիա:

ՀՈԼԱՆԴԻԱ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ

Հոլանդացի փորձագետները պահանջել են Malaysia Airlines-ի Boenig-ի կործանման վայրում շարունակել զոհերի մարմինների որոնումները, որն աղետի է ենթարկվել Ուկրաինայի արեւելքում:

Մինչ այժմ, մասնագետները կարողացել են նույնականացնել միայն 200 մարմին այն դեպքում, երբ օդանավում 298 մարդ է եղել:

Ամստերդամից Քուալա Լումպուր թռչող MH17 չվերթը հուլիսի 17-ին կործանվել է Ուկրաինայի Դոնեցկի մարզի Գրաբովո ավանի մերձակայքում: Օդանավում եղել է Նիդերլանդների 193 բնակիչ, այդ թվում՝ շատ երեխաներ:

Նիդերլանդների կառավարությունը հուլիսի 23-ը հայտարարել է ազգային սգո օր:

ԻՍՐԱՅԵԼ ԱՌՃԱԿԱՏՈՒՄ՝ ԳԱԶԱՅԻ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Իսրայելի հարձակման հետեւանքով, պաղեստինցիների տված զոհերի թիվը Գազայի հատվածում արդեն հասել է 651-ի: Նրանց թվում 161-ը երեխաներ են, 66-ը՝ կանայք: Վիրավորների թիվը կազմել է 4040:

Իսրայելական կողմի հայտարարության համաձայն, ռազմական գործողությունների 16 օրվա ընթացքում, իսրայելական քաղաքների ռմբակոծության հետեւանքով, 29 զինծառայող եւ 2 քաղաքացի է զոհվել, ավելի քան 400-ը՝ վիրավորվել: Իսրայելի ուղղությամբ արձակվել է ավելի քան 90 հրթիռ: Իսկ 16 օրվա ընթացքում արձակված հրթիռների թիվը կազմել է 2100:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐՎՈՒՄ Է 3-5 ՏՈԿՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

Վրաստանի ֆինանսների նախարարության տեղեկատվությամբ, 2014 թվականի համար ծրագրվում է 3-5 տոկոսի տնտեսական աճ: Նախարարության կանխագծումներով, ավելանալու են նաեւ արտասահմանյան ներդրումները, եւ 2018 թվականի համար այն հասնելու է 22 միլիարդ դոլարի:

Ինչպես հայտարարեց ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, հաշվարկային ժամանակահատվածում ՀՆԱ-ի իրական աճը կազմելու է 5-5,5 տոկոս: 2013 թվականին 26,8 միլիարդ լարիի հասնող նոմինալ ՀՆԱ-ն նախարարության հաշվարկներով, 2018 թվականին այն կազմելու է 42 միլիարդ լարի:

Ինչպես հայտարարեց երկրի առաջին ֆինանսիստը, ծրագրվածից պակաս տնտեսական աճը պայմանավորված էր մի շարք գործոններով: «2013 թվականին ծրագրված բյուջեի կատարումը թերացվեց, թեպետ դա էլ ուներ օբյեկտիվ պատճառ: Ամեն ինչ պայմանավորվեց քաղաքական անկայունությունը, հարեւան երկրների հետ տնտեսական հարաբերությունների հետընթաց դինամիկան, ինչը եւ իր ազդեցությունը գործեց ՀՆԱ-ի աճի վրա: Անցյալ տարի վերանայվեցին նաեւ ներդրումային խոշոր նախագծերը, որն էլ իր հերթին, ազդեցություն գործեց բյուջեի կատարման վրա»,- հայտարարեց Խադուրին:

Նոդար Խադուրու տեղեկատվությամբ, 2013 թվականի համար ծրագրված էր ՀՆԱ-ի 6 տոկոսի աճ, որը նոմինալ արտահայտվելու էր 28,9 միլիարդ լարի գումարով: Իրականում աճը 3,2 տոկոս էր, ինչը նոմինալ արտահայտվեց 26,8 միլիարդ լարի գումարով:

Նախարարի հավաստմամբ, ներկայումս տնտեսական ակտիվություն է զգացվում գործանականում բոլոր ոլորտներում: Այն առանձնակի նկատելի է այն ոլորտներում, որոնց վրա տարածված են Վրաստանի օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունները: Նախարարի խոսքերով, ՀՆԱ-ի աճի վրա առանձնակի ազդեցություն են գործել առեւտուրը, վերամշակող արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, ինչպես նաեւ անշարժ գույքի հետ իրականացված գործընթացները:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԸՀ-Ն ՀՐԱՊԱՐԱԿԵՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կոալիցիայի թեկնածուները: Ինչ վերաբերում է մունիցիպալիտետների վարչության նախագահների ընտրությանը, ապա այստեղ էլ հաղթել են կոալիցիայի ներկայացուցիչները:

Հարկ է նշել, որ տեղական ինքնակառավարման ընտրությունների երկրորդ փուլին մասնակցել է գրանցված ընտրողների մեկ երրորդից մի փոքր ավելի մասը:

Տեղական ինքնակառավարման ընտրություններում հաղթանակած քաղաքապետերն ու մունիցիպալիտետների վարչության նախագահներն իրենց պարտականությունների կատարմանը ձեռնամուխ կլինեն օգոստոսի 2-ից:

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունում տեղի ունեցավ մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներին նվիրված հանդիպում վրաց հասարակայնության ներկայացուցիչների հետ:

Ինչպես հայտարարեց կրթության առաջին փոխնախարար Քեթեւան Նատրիաշվիլին, մասնագիտական կրթության համակարգի զարգացման համար առանձնակի նշանակություն ունի ոչ միայն մասնավոր հատվածի ու արհեստավարժ կադրերի ներգրավվածությունը, այլեւ քաղաքացիական հատվածի ակտիվ մասնակցությունը: Հենց այդ նպատակով, կրթության նախարարությունը որոշել է ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ անցկացնել պարբերական հանդիպումներ եւ նրանց տեղեկություններ հաղորդել գերատեսչության ռազմավարության, իրականացվող նախագծերի ու նախաձեռնությունների մասին:

Վրաստանի մասնագիտական կրթության դեպարտամենտի տնօրեն Թամար Տատիաշվիլին հանդիպման մասնակիցներին ներկայացրեց մասնագիտական կրթության համակարգի 2013-2020 թվականների ռազմավարությունը եւ ներկայացրեց իրականացվող նախագծերը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ

Վրաստանի բարձրագույն կրթության մասին օրենքում կատարվելու են փոփոխություններ:

Երկրի կառավարությունն արդեն քննարկել է համապատասխան օրինանախագիծը եւ այն առաքել խորհրդարանին հաստատման համար:

Փոփոխության համաձայն, այն անձինք, ովքեր համապատասխան երկրների օրենսդրությամբ ճանաչված բուհերում սովորել եւ որակավորում են ստացել արտասահմանում, առանց միասնական ազգային քննությունների հանձնման, կարող են ուսումը շարունակել Վրաստանի բուհերում:

Միաժամանակ, ազգային քննությունների շրջանցմամբ, բուհ կարող են ընդունվել նաեւ այն անձինք, ովքեր կրթություն են ստացել Վրաստանի բռնազավթված տարածքներում:

Օրինանախագծով հաստատվում է նաեւ միջազգային կրթական օլիմպիադայի մասնակից Վրաստանի հավաքականի անդամների պայմանական գրանցման եւ ֆինանսավորման կարգը, որը փոխանցվելու է Վրաստանի կրթության ու գիտության նախարարությանը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵՑ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Վրաստանի կառավարությունը հաստատել է դատավորների գնահատման չափորոշիչները: Ինչպես տեղեկացրեց արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, դատական համակարգի բարեփոխման շրջանակներում, եռամսյա փորձառնական ժամկետով նշանակված դատավորներն այդ ժամանակահատվածում գնահատվելու են վեց անգամ:

«Մենք ներդնում ենք համակարգ, որի շրջանակներում, եռամսյա փորձառնական ժամկետով նշանակված դատավորներն այդ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարում գնահատվելու են երկու անգամ: Ընդհանուր առմամբ, սահմանվելու է վեց եզրակացություն, որի հիման վրա, արդարադատության գերագույն խորհուրդը երկու երրորդ ձայներով կընդունի որոշում այս կամ այն դատավորի պաշտոնի համապատասխանելիության մասին: Գնահատականի չափորոշիչները կլինեն ինչպես արհեստավարժության, այնպես էլ՝ անձնական տվյալները, այն հաշվով, որպեսզի բացառվի այն թեկնածուների նշանակումը, որոնք կարող են լինել կաշառված կամ օրենքներից անտեղյակ ու, ամենակարեւորը, տեղյակ չեն, թե ինչպես են իրենց պահելու դատարանի դահլիճում եւ ինչպես են հիմնավորելու ընդունած որոշումը»,- հայտարարեց Թեա Ծուլուկիանին:

Նրա խոսքերով, օրինանախագիծը, որը հավանության է արժանացել կառավարության կողմից, քննարկվելու է խորհրդարանում:

«Կտեղադրվի կայուն ֆիլտր, որպեսզի նորանշանակ դատավորներն առանց գործի իմացության չնշանակվեն ցմահ դատավորներ: Դա մեծ բարեփոխումների անկյունաքարն է»,- հայտարարեց Ծուլուկիանին: Նախարարի խոսքերով, մշակված օրինանախագիծը լրիվությամբ համապատասխանում է զարգացած երկրների չափորոշիչներին:

Վրաստանի արդարադատության նախարարության տվյալներով, այսօրվա դրությամբ, եռամյա փորձառնական ժամկետով դատական համակարգում աշխատում է 12 դատավոր:



ԱՅՑ ԻՍՐԱՅԵԼ՝ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՆԻ ՎՐԱ

Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին հուլիսի 24-ին պաշտոնական այցով ժամանեց Իսրայել: Այցի շրջանակներում, որը ընթանում է մարտական ինտենսիվ գործողությունների ֆոնի վրա, խորհրդարանի խոսնակը հանդիպում ունեցավ Իսրայելի նորընտիր նախագահ Ռեուվեն Ռիվլինի, Իսրայելի օրենսդիր մարմնի Կնեսետի նախագահ Յուլան Յուելեն Էդելշտայնի, Կնեսետի արտաքին գործերի եւ պաշտպանության կոմիտեների ներկայացուցիչ Զեւ Էլկինի, ընդդիմության լիդեր Իսահակ Հերցոգի հետ:

Վրաստանի խորհրդարանի նախագահը ելույթ ունեցավ Կնեսետում:

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԲԱՑՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻ ՎՐԱՍՏԱՆԻ ՇԱՀԵՐԻՆ

Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն, արձագանքելով Ասոցիացման համաձայնագրում ներառված, ազատ առեւտրի հաղորդակցության զարգացման միջոցառումների անցկացման կապակցությամբ, վերջին ժամանակներս աբխազական երկաթուղու վերաբացման մասին տարածվող տեղեկատվություններին, հայտարարեց, որ «Աբխազական երկաթուղու վերականգնման մասին խոսակցությունները կարող են սկսվել այն բանից հետո, երբ դա կհամապատասխանի Վրաստանի շահերին:

Իր հերթին, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին հայտարարեց, որ երկաթուղային հաղորդակցության վերականգնման հարցն առնչվում է միայն վրաց-ռուսական հարաբերություններին, եւ այն Աբխազիայի հետ ընդհանուր ոչինչ չունի: «Երկաթուղային հաղորդակցությունը կվերականգնվի, թե ոչ, դա վրաց-ռուսական բանակցությունների թեման է, սակայն, այդ ուղղությամբ ներկա դրությամբ ոչինչ չի ծեռնարկվում»,- հայտարարեց Զաքարեիշվիլին:

ԸՆՏՐՎԵԼ ԵՆ ԹԲԻԼԻՍԻԻ ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, անցկացվեց Թբիլիսիի նորընտիր սակրեբուլոյի անդրանիկ նիստը: Նիստին պատգամավորները սակրեբուլոյի նախագահ ընտրեցին Գիորգի Ալիբեգաշվիլուն, իսկ առաջին տեղակալ՝ Գիորգի Տղեմալաձեին: Փոխնախագահներ են ընտրել Մալխազ Մձեդլիշվիլուն ու Գիորգի Ախվլեդիանուն. բոլորը «Վրացական երազանք» կոալիցիայից են:

Ներկայումս սակրեբուլոյի անդամները ձեռնամուխ են եղել սակրեբուլոյի հանձնաժողովների եւ խմբակցությունների նախագահների ընտրությանը:

ՎՐԱՑ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ ԱՖՂԱՆՍՏԱՆԻՑ

Աֆղանստանից առանց կորուստների հայրենիք է վերադարձել հրածգային երկրորդ բրիգադի 23-րդ գումարտակի զինվորականների առաջին հոսքը: Թբիլիսիի Ալեքսեեւկայի օդանավակայանում կայացավ զինտորաբաժնի դիմավորման արարողությունը:

Գումարտակը շուրջ չորս ամիս գտնվում էր Աֆղանստանի «Լեզերնիկ» ռազմակայանում: Վրաց զինվորականների քառամյա ծառայությունից հետո, 23-րդ գումարտակը վրաց վերջին զորամիավորումն էր, որը, միջազգային առաքելության շրջանակներում, Հելմանդի նահանգում Վրաստանի դրոշի ներքո մարտական գործողություններ էր իրականացնում:

ՄԻՋԱԴԵՊ

ԸՆԴՀԱՐՈՒՄ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

գնահատում Վրաստանի ներքին կայունությունը, այս երկրում բազմադարյա միջազգային ու միջկրոնական հարաբերությունները եւ կոչ ենք անում Վրաստանի իրավապահ մարմիններին՝ համապատասխանաբար գնահատել տվյալ գործողություններն ու հետաքննել դրանք...»:

Տեղի ունեցածը նկարահանվել է «Հայարտան» դիտարկող տեսախցիկներով: Այս պահի դրությամբ, հարուցվել է քրեական գործ, եւ ընթանում է քննություն:

ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Միջադեպի հաջորդ օրը, կառավարության նիստում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հատուկ անդրադարձավ տեղի ունեցածին եւ ՆԳ նախարարից պահանջեց իրականացնել համապատասխան հետաքննություն եւ պատասխանատվության ենթարկել մեղավորներին: Վարչապետի խոսքերով, ինքն անձամբ կվերահսկի հետաքննության ընթացքը:

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի ներքին գործերի նախարարությունում այն կարծիքին են, որ Թբիլիսիի Սուրբ էջմիածին հայկական եկեղեցու մոտ տեղի ունեցած միջադեպը միջէթնիկական բնույթ չէր կրում:

«Միջադեպը միջէթնիկական բնույթ չէր կրում: Դիմակայությունը տեղի է ունեցել փողոցում, ավտոմեքենայի կայանման պատճառով: Հետաքննությունը վարում են 125-րդ հոդվածով (հարվածներ հասցնելը)»,- հայտնել է գերատեսչության ներկայացուցիչը:

ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցու հարակից տարածքում հուլիսի 19-ին տեղի ունեցած միջադեպը հուլիսի 23-ին քննարկման թեմա դարձավ Վրաստանի խորհրդարանի մարդու իրավունքների կոմիտեում: Պատգամավորները դատապարտեցին տեղի ունեցածն ու բոլորին կոչ արեցին մինչեւ հանգամանքների պարզաբանումը խուսափել մեկնաբանություններից: Կոմիտեի նիստում վերոնշյալ հարցը բարձրացրել էր Ախալքալաքիի շրջանից մեծամասնական պատգամավոր Սամվել Պետրոսյանը: Հարցի պարզաբանումներով, ելույթ ունեցավ մարդու իրավունքների կոմիտեի փոխնախագահ Ռուսլան Պողոսյանը: Նա, մինչ այդ, անմիջականորեն տեղում հանդիպել եւ զրուցել էր միջադեպի ականատեսների հետ:

«ԳՈՐԾԸ ՊԵՏՔ Է ՎԵՐԱՈՐԱԿԱՎՈՐՎԻ»

Վրաստանի ժողովրդական պաշտպան Ուչա Նանուաշվիլին մեկնաբանել է հուլիսի 19-ին Թբիլիսիի Հավլաբար թաղամասի Սուրբ էջմիածին հայկական եկեղեցու մոտ տեղի ունեցած միջադեպը եւ պահանջել փոխել գործի որակումը:

«Այդ գործը պետք է վերաորակավորվի: ՁԼՄ-ները տեղեկատվություն են տարածել այն մասին, որ հետաքննությունն ընթանում է Վրաստանի Քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածով (ծեծի ենթարկելը): Թեեւ, Վրաստանի ժողովրդական պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչների կողմից անցկացված հարցումներից ու միջադեպը ներկայացնող տեսանյութի ուսումնասիրումից հետո, հաստատվում է, թե հնարավոր է՝ տեղի ունեցածը խուլիգանություն է, խմբային բռնության կազմակերպում, առողջությանը վնասում»,- հայտարարել է Վրաստանի ժողովրդական պաշտպանը:

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ. «ԱՅԴ ՀԱՐՑՈՎ ԶԲԱՂՎՈՒՄ ԵՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ»

Արձագանքելով տեղի ունեցածին՝ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը ասաց. «Մենք գիտենք, թե ինչ է պատահել, ինչից է սկսվել այդ վիճաբանությունը, սակայն այս պահին բարձրաձայնել, թե դիտավորյալ բան է տեղի ունեցել, չենք կարող ասել: Խուլիգանության մասին նույնպես ոչինչ չենք կարող ասել, իրավապահ մարմիններն են զբաղվում»:

ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցու հարակից տարածքում տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ, Վրաց Պատրիարքարանը հանդես եկավ հայտարարությամբ.

«Հուլիսի 22-ին Վրաց Ուղղափառ Սուրբ եկեղեցու Պատրիարքարանում կայացավ հանդիպում Պատրիարքարանի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ղեկավար, Զուգդիդիի ու Ցաիշիի միտրոպոլիտ Գերասիմի եւ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի միջեւ:

Հանդիպմանը քննարկեցին հուլիսի 19-ին Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցու մոտ տեղի ունեցած միջադեպը: Կողմերը նշեցին, որ կենցաղային հողի վրա ծագած միջադեպը չի կրում կրոնական եւ էթնիկ բնույթ, ինչի հետ լրիվությամբ համաձայն են իրավապաշտպան ոչ կառավարական գրեթե բոլոր կազմակերպությունները: Թեպետ կան նաեւ բացառություններ, որոնք հանդես են գալիս չհիմնավորված ու անպատասխանատու հայտարարություններով, եւ դա ափսոսանք է առաջացնում:

Վրաց Ուղղափառ Սուրբ եկեղեցին դատապարտում է հուլիսի 19-ին տեղի ունեցած միջադեպը եւ դիմակայության մասնակից կողմերին խաղաղության ու հանգստության կոչ անում: Միաժամանակ այն, ինչպես միշտ, փորձում է նպաստել հիմնախնդրի կարգավորման եւ կրոնական տարբեր ուղղությունների ներկայացուցիչների խաղաղ գոյակցությանը»,- ասված է Պատրիարքարանի հայտարարության մեջ:

Հանդիպման մասնակիցները կարեւորեցին վրաց եւ հայ միջեկեղեցական հարաբերությունները եւ դարերով ձեւավորված բարեկամությունը:

Հանդիպման մասնակիցները հույս հայտնեցին, որ իրավապահ մարմինները կգտնեն միջադեպի կազմակերպիչներին ու մեղավորներին կպատժեն՝ Վրաստանում ժողովուրդների միջեւ ցանկացած պառակտում կանխելու նպատակով:

Տեղի ունեցածի վերաբերյալ բազում արձագանքներում, Վրաստանում եւ Հայաստանում համոզմունք են հայտնում, որ կենցաղային բնույթի վիճաբանությանը, որը կարող է ծագել ամեն քայլափոխի, չպետք է տալ քաղաքական ենթատեքստ՝ դրանով իսկ իսկապես վտանգի ենթարկելով հայ-վրացական հարաբերությունները, ջուր լցնելով դրանով հետաքրքրված ուժերի ջրաղացին: Իսկ որ նմանները շատ են ինչպես երկրի ներսում, այնպես էլ՝ երկրից դուրս, անտարակուսելի է:

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ԷԼԳՈՒՋԱ ԽՈԿՐԻՇՎԻԼԻ. «ՊԱՐՏԱԴԻՐ ՊԵՏՔ Է ԷԼԵՏՐԱԿԱՆԱՅՎԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ»

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից եւ, առանձնապես, Եվրամիության հետ Ասոցիացման պայմանագրի ստորագրումից հետո, առանձնակի հրատապություն ձեռք բերեց տարածաշրջանների ապակենտրոնացման հարցը: Թեմայի կապակցությամբ, մենք հարցազրույց ունեցանք Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար էլգուջա Խոկրիշվիլու հետ: Սակայն, մինչեւ հարցազրույցի հրապարակումը, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախաձեռնությամբ, իրականացվեցին կադրային փոփոխություններ, որոնք առնչվեցին նաեւ մեր զրուցակցին: Էլգուջա Խոկրիշվիլին ազատվեց տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարի պաշտոնից ու առաջադրվեց որպես շրջակա միջավայրի եւ բնապաշարների նախարարի թեկնածու: Համոզված ենք, որ նախարարության նոր ղեկավարը հաջողությամբ կավարտի կյանքի կոչել այս հույժ կարեւոր հարցը:

- Բատոնո էլգուջա, օրերս Ձեր գլխավորած նախարարությունը ներկայացրեց ընթացիկ տարվա առաջին կեսի աշխատանքների արդյունքները: Մի քանի խոսք՝ այդ մասին:

- Իրոք, մենք ներկայացրինք նախարարության եւ մեր գերատեսչության ենթակայության ներքո գտնվող հաստատությունների գործունեության ընթացիկ տարվա առաջին կեսի արդյունքները: Հաշվետվության մեջ նշված է, որ սկսվել է 209 նախագծի իրականացումը, շարունակվում է 302 նախագծի իրականացման աշխատանքները եւ, վեց ամսվա արդյունքներով, արդեն ավարտվել են 114 նախագծի շուրջ աշխատանքները: Նշված է նաեւ, որ նախարարությունը հաշվետու ժամանակահատվածում գործում էր երկու ուղղություններով. կապիտալ ներդրումներ՝ ուղղված ենթակառույցների զարգացմանն ու միջոցառումներ՝ ուղղված կոնկրետ տարածաշրջանների զարգացմանը:

- Իսկ ավելի կոնկրետ:

- Խնդրեմ: Նկատի ունեմ ինքնակառավարման նոր օրենսգիրքը, որը նախատեսում է նոր պայմաններում տարածաշրջանների զարգացման ծրագիրը, որն էլ, իր հերթին, նպաստելու է ինքնակառավարման սկզբունքի զարգացմանը, ինքնակառավարման հնարավորությունների ուժեղացմանը՝ ուղղված նոր մեխանիզմների ներդրմանը:

- Իսկ ինչպե՞ս ենք նախատեսում ուժեղացնել ինքնակառավարումը: Ակնհայտ է, որ կոնկրետ քայլեր են ձեռնարկվելու տարածաշրջանների ֆինանսական անկախության հաստատման ուղղությամբ, սակայն ի՞նչ է արվելու կոնկրետ տարածաշրջանների ապակենտրոնացմանը հասնելու համար:

- Մենք կցուցաբերենք տեխնիկական օգնություն, ինչը նախատեսում է մասնագիտական խորհրդատվություն, փորձագիտական աջակցություն: Մեր նախարարության պատվերով, իրականացվում է տարածաշրջանային զարգացման ռազմավարության մշակումը: Ռազմավարական հիմնադրույթի մշակումից հետո, ձեռնամուխ կլինենք գործողության ծրագրի մշակմանը: Ինքնակառավարման եւ տարածաշրջանային մարմինների համար կմշակվեն ձեռնարկներ, որոնք կներառեն առաջիկա չորս տարիներին այդ մարմինների գործունեության հիմնական ուղղությունները: Իսկ ինչ վերաբերում է ռազմավարությանը, ապա այն առաջին հերթին ներառելու է կոնկրետ տարածաշրջանների ներուժի գնահատականը, ըստ ուղղությունների մրցունակության բաշխումը եւ այլն: Մի խոսքով, այն ամենը, ինչի վրա բեւեռվելու է առանձնակի ուշադրություն: Հող է նախապատրաստվում, որպեսզի ինքնակառավարումները նպատակամղվածորեն եւ աստիճանաբար գործեն տարածաշրջանի տնտեսական ներուժի զարգացման ուղղությամբ:

- Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրի ստորագրումից հետո, թեւակոխել ենք ստանձնած պարտավորությունների կատարման փուլը: Այդ առումով, կոնկրետ ի՞նչ է արվելու Ձեր գլխավորած գերատեսչության կողմից:

- Նշեմ, որ Ասոցիացման համաձայնագրին կցված է գործողությունների ծրագիրը: Այդ ծրագրում կան առանձին բաժիններ, որոնք անմիջականորեն առնչվում են մեր նախարարությանը: Մենք մշակելու ենք տարածաշրջանների զարգացման երկարաժամկետ ծրագիրը ներկայացնել այդ հարցում կառավարության միտմանը: Ներկա դրությամբ կարող եմ ասել, որ այդ աշխատանքները հիմնականում արդեն կատարվել են: Մենք կառավարությանն արդեն ներկայացրել ենք տարածաշրջանների զարգացման ծրագիրը: Ծրագիրը կառավարության նիստում արժանացավ հավանության ու հաստատվեց: Արդեն մշակել ենք նաեւ յուրաքանչյուր տարածաշրջանի զարգացման ռազմավարությունը, որը նույնպես հաստատվել է: Այնպես որ, Ասոցիացման համաձայնագրի վերոնշյալ պահանջն արդեն կատարվել է, ներկայումս մշակում ենք գործողությունների ծրագիրը, որը, մեր հաշվարկումներով պատրաստ կլինի սեպտեմբեր-հոկտեմբերին: Ծրագրում ենք նախարարությունում հիմնել եվրահնտեգրման վարչություն, որի հիմնական խնդիրը Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովումն է լինելու: Կհիմնվի նաեւ հանձնաժողով, որը կիրականացնի ծրագրված աշխատանքների համակարգումը:

- Ասոցիացման համաձայնագիրը նախատեսո՞ւմ է արդյոք ենթակառուցային նախագծերի իրականացում: Այդ տեսանկյունից, ի՞նչ է արվելու երկրում:

- Համաձայնագրում հիմնականում խոսքը վերաբերում է տարածաշրջանների զարգացմանը, իսկ մանրամասների մշակումը վերապահվում է մեզ:

- Այսինքն, եթե ճիշտ հասկացա, համաձայնագրում հիմնական շեշտը դրվում է տարածաշրջանների ապակենտրոնացման հարցի վրա:

- Այո, համաձայնագրում շեշտը դրվում է տարածաշրջանների զարգացման, ինքնակառավարման հզորացման եւ ապակենտրոնացման վրա, ինչը նախատեսում է տեղական նշանակության որոշումների ընդունման գործընթացում բնակչության ակտիվ մասնակցություն: Դա էլ հենց տարածաշրջանների ուժեղացումն ու ինքնակառավարման անկախությունն է: Նախատեսվում է նաեւ վերացնել տարածաշրջանների միջեւ անհիրավահավասարությունը, ամենուրեք կենսամակարդակն ու սպասարկումների մատակարարման ռազմավարությունը պետք է լինի հավասար:

- Ձեր ընդդիմախոսները հաճախ են հանդես գալիս հայտարարություններով, որ երկրում ենթակառուցային նախագծերը կամ ընդհատվել են, կամ վերացվել: Ի՞նչ կասեիք այդ մասին:

- Եկեք խոսենք կոնկրետ թվերով: Ընթացիկ տարվա առաջին վեց ամիսների ընթացքում իրականացվել է 305 միլիոն լարիի աշխատանք: Նշեմ, որ սկսած 2009 թվականից, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության կողմից նման գումարի աշխատանքներ երբեք չեն արվել:

2012 թվականին ճանապարհաշինական աշխատանքներ էին տարվում 71 կիլոմետր հատվածում, անցյալ տարի մենք այն հասցրինք 111 կիլոմետրի, իսկ այս տարվա կես տարվա արդյունքներով աշխատանքներն ընթանում են 131 կիլոմետրի վրա եւ մինչեւ տարվա վերջը այն հասցնելու ենք 150 կիլոմետրի:

Ընդդիմախոսները ելույթ են ունենում նաեւ չյուրացված բյուջետային գումարների, ընդհանրապես դադարեցված նախագծերի հարցով: Ի գիտություն նրանց, պետք է ասեմ, որ բյուջետային գումարների յուրացման աշխատակարգը սահմանվում է՝ ելնելով ժամանակահատվածից: Բնականաբար, փոքր ծավալի աշխատանքներ են ծրագրվում հունվար-փետրվար-մարտին եւ ավելի մեծ ծավալների՝ հաջորդ ամիսներին:

Ինչ վերաբերում է իբր դադարեցված նախագծերին, ապա նման ոչինչ չկա: Ուղղակի որոշ նախագծեր վերանայվել են: Օրինակ, Թբիլիսիի կամրջի, առանձին գյուղերի ջրամատակարարման համակարգերի շինարարության նախագծերը:

Այնպես որ, ոչ մի նախագիծ եւ ծրագրված միջոցառում մեր կողմից ո՛չ ընդհատվել է եւ ո՛չ էլ դադարեցվել:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ